

ՋԱՆԵՎՏԱԿԱՆ

Ի Մ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

(նուէր թիշկներին)

Յիսուսն և հինգ տարիս արդէն անցել էր, բայց ես դեռ
ոչ մի տեսակ հիւանդութիւն չէի տեսել մինչև 1901 թուականի
նոյեմբերի 2-ը: Բժիշկները, դեղատները դեռ իմ փողի համը
չէին տեսել: Նրկաթի պէս առողջ կեանք եմ ունեցել: Քնելու
ուտելու ընդարձակ ախորժակ: Առանց կրօնի խտրութեան, ա-
մենայն ախորժակով վայելել եմ ամեն տեսակ կերակուր: Տաքն
ու պաղն, աղին ու ալանին, կծուն ու թթուն հաւասար արժէ-
քով եղել են իմ սիրելի կերակուրները: Այսինքն բժախնդիր
չեմ եղել:

55 տարի ոչ մի տեսակ հիւանդութիւն չտեսնելուց յետոյ
անցեալ 1901 թուի նոյեմբերի 2-ին ուրախ զուարթ, բողկի պէս
առողջ, երեկոյին ժամը 11-ին պարկեցի քնելու: Առաւօտեան
տեղիցս վերկենալիս զգացի մի թեթև ցաւ, թիկունքիս տակը,
գօտկատեղը՝ դէպի աջ: Ոչինչ, դատարկ բան է, կանցնի՝ ա-
տելով, չորս օր անց կացաւ և ցաւը քանի գնաց սաստկացաւ,
բայց պարկել չեմ ուզում: Գնում եմ գործի և դասերս շարու-
նակում: 4 օրից յետոյ շարժողութիւնս դանդաղացաւ, արագ
քայլել, կռանալ չեմ կարողանում, կօշիկներս ծառան է հագց-
նում: Ել համբերել չէր կարելի, հարկաւոր էր բժշկի դիմել:

Ա. Բժիշկ եւ առաջին դեղ: Ամենից առաջ, Վեժան պըր-
ժնելու համար, հրաւիրեցինք մեր խնամի Սալոյին, որ հազար-
ներին է սաղացրեր:

Խնամի Սալոն մէջքս տրորելուց յետոյ ցաւիս անունը
դրեց «Մզհանզուստ» և ամենայն լստահութեամբ յուսադրեց
որ չորս անգամ տրորելուց յետոյ կանցնի:

Սկսեց բժշկութիւնը, իւղ քսեց, մօտ կէս ժամ տրորեց հիւանդ մասը և անլուայ բուրդ կապեց վրան, «տաք պահիր քեզ, Թթու, մթու չուտես» ասաց ու գնաց:

Չորս անգամ խնամի Սալոն գնաց ու եկաւ. մի և նոյն գործողութիւնը կատարեց, բայց «Մզհանգուտը» ոչ միայն չըմեղմացաւ, այլ գզալի կերպով սաստկացաւ. ուրեմն պէտք է խնամի Սալոյի պոչը կապել, և ուրիշ միջոցի դիմել:

Բ. բժիշկ եւ ը. դեղ. Գտանք մի փորձուած պառուս կին, եկաւ տուն, քնեց, ցաւիս անունը դրեց «Ղոլիինճ» և շաքարի թղթի վրայ սպիրտով և խնկով ետխու չինեց և քաշեց ցաւած մասի վրայ: Անցկացաւ երեք օր, ցաւը սաստկացաւ և ցաւի վրայ աւելացրեց սաւրսափելի քոր, որին ոչ համբերել կարելի էր, և ոչ քորել: Եթէ մի փոքր քորէի, այնպէս կը գրգռուէր, կը բորբոքուէր, կը կատաղէր, որ երկաթէ չանկերով պիտի քորել: Այդ քորի առաջը առնում էինք սպիրտ կամ օղի քսելով. որ տեսնւմ էր մի երկու ժամ. և կրկին առաջ գալիս քորը:

Այս բժշկութիւնից յետոյ մէջքիս ցաւը կամաց-կամաց իջաւ ցած, ընկաւ աջ ոտս և բոլորովին արգելեց մանգալս:

Գ. բժիշկ եւ գ. դեղ. Պատրաստում էի օրինաւոր բժշկի դիմել, պատահեցաւ Ուս. Հ. Տէր Խ. որ մանկավարժութեան հետ խառը բժշկութիւն էլ է անում, բայց ձրի, մարդասիրաբար:

Այս պարոնը բոլոր պատմութիւնը լսելուց յետոյ, ցաւիս անունը դրեց «քամի» և իւր անձնական փորձերի վրայ հիմնուած պատուիրեց. «խոտի ծաղիկը լաւ եփել, քաթանը դնել այդ եփած ջրի մէջ և տաք տաք քաշել ցաւոտ տեղերին. երեք անգամ կրկնելուց յետոյ կանցնի»:

Լի հաւատով այդ էլ արեցինք. բայց ընդհակառակը ցաւը աւելի կատաղեցաւ:

Չէ, պէտք է հեռանալ այդ պառուս մառաններից և պէտք է դիմել դիպլոմաւոր բժիշկների:

Դ. բժիշկ եւ դ. դեղ. Դիմեցի բժիշկ Վ.-ին, պատմեցի մանրամասնաբար ամեն բան: Պ. բժիշկը ցաւիս անունը դրեց «Դարդակ բան է» և ուղարկեց իւր ֆելդշերին, որ կպցրեց մէջքիս վրայ «Սուխոյ» բանկաներ: Նրկու անգամ այս գործողութիւնը կրկնելուց յետոյ, ֆելդշերը պատուիրեց տաք պահել. էլ բան հարկաւոր չէ, չուտով կանցնի: Մի երեք օր էլ

սրան սպասեցինք, բայց ոչինչ օգուտ չէ տեսանք, ցաւը քանի զնաց սաստկացաւ:

Ծ. ԲԺԻԶԿ ԵՆ Ե. ՂԵՂ. Դիմեցինք քաղաքային բժիշկ պ. Կ. Կանցին, որը ցաւիս անունը դրեց «Րեւմատիզմ» և գրեց դեղատոմս. պատուիրեց գործածել նշանակուած քսէլու և խմելու դեղերը և ամեն երեկոյ ընդունել տաք վաննա:

Մի քանի անգամ զնացինք հիւանդանոցը, և ամենայն ճշդութեամբ կատարեցինք բոլոր պատուէրները, բայց դժւր. աներես ցաւը քանի զնում սաստկանում էր:

Զ. ԲԺԻԶԿ Գ. ՂԵՂ. Բժիշկ բժշկի ետեից փոխելով, դեղ դեղի ետեից կուլ տալով ցաւի հետ կռուելով, հասանք նոյեմբերի 20-ը: Արասթուման, Պետիգորսկ, Բորժոմ, և այլ հանքային ջրեր ասպարէզ եկան, խօսակցութեան առարկայ դարձան: Բայց ձմեռ է. օգտակար չէ այդպիսի տեղեր զնալ: Նրկար խորհրդակցելուց յետոյ վճռուեցաւ զնալ Կարսի զինուորական հիւանդանոցը, պատճառելով որ տանը վաննաները պահանջուած տաքութեան չեն համապատասխանում, դեղերը անկանոն են դործ ածուում, կերակուրները վնասակար են հիւանդութեան և այլ զանազան իրաւացի և անիրաւացի պատճառաբանութիւններ:

Նոյեմբերի 20-ին ես պարկած էի քաղաքի զինուորական հիւանդանոցում:

Նկաւ բժիշկը, հարց ու փորձ արեց, մանրամասնաբար քննեց և ցաւիս անունը դրեց «Լոււքալոս»: Այդ բառը լատիներէն է. չեմ հասկանում ինչ կընշանակէ: Սկսուեցաւ կանոնաւոր բժշկութիւն, քսեցին եօդը. դրեցին կօմպրէսներ, օրը երկու անգամ վաննա, մասաժ, ընդունում էի պատուիրած դեղերը և լի հաւատով սպասում առողջութեանս: Բժիշկը օրը երկու անգամ այցելում էր և առանձին ուշադրութիւն դարձնում ինձ, բայց տարաբախտաբար ոչ միայն չի մեղմանում ցաւս, այլ ընդհակառակը աստիճանաբար վատանում է:

Նս իւրաքանչիւր օրուայ համար առանձին առանձին օրագրութիւն էի կազմում. որոնցից միայն մէկը արտագրեմք այստեղ:

Նոյեմբերի 26 1901 թուականի քաղաքի զինուորական հիւանդանոցում, մահճակալի վրայ նստած գրում եմ հետեւալ տողերը. «Իշխր է. դճոն գիշեր անխիղճ գիշեր... Ո՛հ. որքան էլ երկար է, վերջ չունի: Բոլորը քնած են. ժամը մէկն է: Ար-

Թուն է միայն իմ կատաղի «Ղուճաղօն» որ անխիղճ կերպով պինդ բռնել է աջ ոտիցս, կրծում է կատուի պէս: Դառնում եմ աջ կողքիս. ընկնում եմ քամակիս. երեսիս. դառնում եմ ձախ, նստում եմ. կանգնում, բարձերիս տեղը փոխում եմ, հազար ու մի տեսակ դիրք եմ ստեղծում, ցաւս մեղմացնելու համար զանազան միջոցներ եմ ձեռք առնում... բայց իզուր. Ղուճաղօն խիղճ չունի, նա մի բոպէ չի դադարում...

Ոչ ոք չկայ. արթուն է միայն քնած ընկերս, որ համ խուճացնում է, համ էլ անի վանի հառաչում, երբեմն երբեմն արթնանում, նորից քնում: Նրանի նրան, ով կարող է քնել: Չորս պատ, մի հիւանդ ընկեր և մի քանի անշունչ առարկաներ: Ոչ ոք չի խօսում հետս, ոչ մի տեղից մի մխիթարական խօսք, մի յուսադրական բառ չեմ լսում: Ահա այդպիսի մի յարմար ժամանակ Ղուճաղօն գործում է անդադար, ասղնդում. ծակծկում, մզմզում և թոյլ չի տալիս մի բոպէ մոռանալ իրան:

Սպասում եմ անհամբեր լուսանալուն, որպէս զի մարդի ներս տեսնեմ մի մխիթարական բառ լսեմ: Բայց իմ քօռ բախտից գիշերը կարծես երկարել է. չոքել է բկիս այդ սև գիշերը և միտք չունի լուսանալու: Մի ժամում հազար անգամ նայում եմ ժամացոյցիս, բայց ժամացոյցս էլ անգուլթ է դառել, նրա անիծեալ սլաքները կարծես կպել են ապակուն և ամենկին չեն շարժւում: Կարծում եմ կանգնել է. դնում եմ ալանջիս, լսում եմ չխկիկոցը. ուրեմն բանում է անիծեալը: Ժամը մէկն է. դեռ հինգ ժամ էլ պիտի չարչարուեմ. հինգ ժամ. հինգ օրուայ չափ է երևում:

Անիծեալ ժամացոյց. եթէ վճռուած լինէր, որ առաւօտեան արշալոյսին ինձ կախաղան պիտի հանեն, այն ժամանակ քո սլաքները նետի պէս կը թռչէին և այդ հինգ ժամը հինգ բոպէի պէս կանցնէր: Ե՛հ, այլարհիս մէջ ինչն է մնացել անաչառ, որ ժամացոյցս լինի:

Ո՛հ, այս ինչ անտանելի դրութիւն է, ինչ անտէրութիւն. ջուր եմ ուզում. ջուր տուող չկայ. վրէս ծածկող չկայ, բան եմ հարցնում պատասխանող չկայ... Ձէ, էլի լաւ է մեռնել, բայց տանը մեռնել:

Ամեն գիշեր այսպիսի մի օրագրութիւն էի չարադրում և լաց լինելով լուսացնում:

18 օր դեղ կուլ տուինք, մասսօթով կող ու կուշտս ջարդեցին. առաւօտ երեկոյ եռման վաննաների մէջ խաչեցին,

քայց Լուսաբակոյի հախից չկարողացան գալ: Լուսաբակոն դառել էր մի արիւնաբերու գազան և կրծում էր ոտքս: Երբեմն իրա համար զբօսանք էր սարքում, մտնում է ոտքիս թաթը. անցնում է սրունքս, ընկնում է ծնկանս մէջ, փոխւում է ազդբս և այլն ըստ կարգի:

Անիծեալ լինի Լուսաբակոն, քանի մանուկ էր չկարողացանք նրան խեղդել օրօրոցի մէջ. իսկ այժմ դառել է երիտասարդ և կուռում է բոլոր բոխկների հետ:

18 օր հիւանդանոցում բժշկութեամբ հետևանքն այն եղաւ, որ դառայ բոլորովին անգամալոյծ. էլ մահճակալից ցած իջնել չէի կարողանում և լուացւում էի մահճակալի վրայ նստած:

18-դ օրը ինձ այցելող բժշկի խօսակցութիւնից պարզ հասկացայ, որ իմ ցաւս այդ տեղ բժշկող չկայ. հարկաւոր է վերադառնալ տուն:

Լի հաւատով և մեծ յոյսով գնացի հիւանդանոց, և այնտեղից վերադարձայ բոլորովին յուսահատուած և հաւատս կորցրած դէպի բժշկական գիտութիւնը:

Ը. բժիշկ եւ է. դեղ. Հիւանդանոցից ամենայնուհանդերձեան մէջ նոր էի վերադարձել տուն, և մինչդեռ մտածում էի մի ճար գտնելու, այցելութեան եկաւ ինձ իմ լաւ ծանօթներս մինը և երբ մանրամասնաբար ծանօթացաւ ցաւիս հետ՝ շատ ցաւեց, որ ինքը ուշ է իմացել և երբ լսեց որ բժիշկ պիտի հրաւիրեմ՝ բարկացաւ, որ այդպիսի մի դարտակ բանի համար բժշկի եմ դիմում: Այդ ինքնակոչ բժիշկը ցաւիս անունը դրեց «ԴՂու քամի» և հրամայեց. «Երբ բերես մաքուր նաւթ. օրը մի անգամ մբողջ ոտդ նաւթով լաւ կը տրորես և մաքուր շորով կը կապես: Չորս անգամ քսելուց յետոյ, բոլորովին կը վերջանայ»:

Հեշտ բան, անմեղ բան, էփան բան, ինչո՞ւ չը փորձենք:

Սկսեցինք իշու քամու գլուխը նաւթով լուալ:

—Բայց ինչ. դուրս եկաւ մի խայտառակ բան. ոտքս սարսափելի ուռեց. առաջ եկաւ անտանելի քոր. և ցաւը աւելի և աւելի կատաղեց: Երբորդ օրը վերջացրի, էլ չէր կարելի դիմաւալ. դէն չպրտեցի նաւթային բժշկութիւնը:

Ը. բժիշկ եւ Ը. դեղ. Հրաւիրեցինք տուն բաղաբային բժիշկ պ. Հ. անցին և խնդրեցինք ամեն օր այցելել և կանոնաւոր բժշկութիւն սկսել:

Ս. բժշկութիւնից յայտնի է, որ Պ. Հ. անցը ար.

դէն ծանօթ է իմ ցաւիս: Նա սկսեց դործ ածել ելեքտրական մեքենայ և հարկաւոր դեղեր թէ խմելու, թէ քսելու: Ամեն օր այցելեց և օրը մի անգամ 10 բոպէ այդ մեքենայով չարչարեց տարաբաղդ ոտքս: Թէև անտանելի էր մեքենայի տուած ցաւը, բայց 10 բոպէ պիտի տանէի այդ տանջանքը: Ութ օր պ. Հ.-եանցը փորձելուց և մի զգալի օգուտ չըտեսնելուց յետոյ, 8-դ օրը խորհուրդ տուեց ինձ գնալ Տփլիս դիմել բժ. Բ.-եանցին և օգտուել բաղանիքներով դադարեցրիւք բժշկութիւնը և մտադրուեցանք հետեւել սրա խորհրդին:

Թ. Բժիշկ եւ Թ. դեղ: Դեկտեմբերի 21-ին դուրս եկայ Կարսից և դարձեալ լի հաւատով գնում եմ Տփլիս. 22-ին առաւօտեան ես պարկած էի հիւրանոցի ցուրտ սենեակում: Իմ առաջին հոգսս եղաւ ընտանիքի մէջ մի տաք սենեակ գտնել. հիւրանոցի կեանքը ինձ վնասակար է: Հարկաւոր է բաղանիքներին մօտիկ տուն գտնել: Բարեկամիս հետ նստեցիւք կառք և մի ժամից յետոյ մեզ յաջողեց Ս. Սարգսի փողոցում յարգելի Դօմագեանների տանը ընդունուել: Դա իսկ Աստուծոյ յաջողութիւնն էր. քոյրս, մայրս և եղբայրներս այնպէս խնամք չէին տանում ինձ վրայ, ինչպէս պահում և ամեն կերպ միութարում էին ինձ այդ տան բոլոր անդամները: Այս առաջին և ամենագլխաւոր հոգսը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ գնացի պ. բժ. Բ.—եանցի մօտ: Պատմեցի սկզբից մինչև վերջը և նա այդ պատմութիւնը և իւր տուած հարցերի պատասխանը մտքեց իւր օրագրական մատեանում: Պատմութիւնը և հարց ու պատասխանը վերջացնելուց յետոյ բժիշկը աւելացրեց ճամենեւին հոգս մի անիր, դարբակ բան է և շատ շուտով կանցնի:

Բժշկի այդ յուսադրական անուշ խօսքերը ինձ կատարելապէս մխիթարեցին և կարծես ցաւս թեթեացաւ: Վաղը կիւրակի է, չես դալ. երկուշաբթի ժամը 10-ին կը գաս: Ամեն օր Միրզոյեանցի բաղանիքը կը գնաս, և առանձին նոմերում տաք տաք վաննա կընդունես, և քիսաչիներին ամեն օր լաւ տրորել կըտաս: պատուիրեց բժիշկը և արձակեց ինձ:

Սրկուշաբթի 24-ին դեկտեմբերի առաւօտեան ժամը 10-և կէսին ես կանգնած էի բժ. Բ.-եանցի ելեքտրական կայծակնափայլ մեքենայի առաջ: Բժիշկը պտտում էր անիւը և ելեքտրականութեան հոսանքները մաղւում էին ամբողջ մարմնիս մէջ:

Քաջն Լուսաբակուն մինչև ցայսօր ութը պատերազմի մէջ էր ընկել և ամեն անգամ յաղթող հանդիսացել:

1. «Լուսաբակուն ամենից առաջ ոտնատակ տուեց խնամի Սալոյի իւղն ու կարագը, բուրդն ու բամբակը.

2. Ծաղրեց պառաւ հեքիմի խնկէ եախուն.

3. Բժեց ուս. 4. Տէր Խ.-եանցի խոտ ու դարմանի վրայ.

4. Արհամարհեց Վ.-կովի սուխոյի բանկաները:

5. Ոչնչացրեց բժ. 4.-եանցի քսելու դեղերը:

6. Հերոսաբար կռուեց զինուորական բժիշկներին, դեղերի, եռման վաննաների և ամեն տեսակ պատրաստութեան դէմ:

7. Ծիծաղեց բազմափորձ ծանօթիս նաւթային բժշկութեան վրայ:

8. Դէն շարտեց բժ. 4.-եանցի ելէքտրական փոքրիկ մեքենան.

Սյօր 24 դեկտեմբերի Լուսաբակուն գտնուում է իններորդ պատերազմում:

Ութը պատերազմի մէջ ամեն տեսակ միջոցների հետ կռուելով յաղթող է հանդիսացել:

Լուսաբակուն քաջերի քաջն էր. բայց բժ. Բ.-եանցի հսկայ ելէքտրական մեքենան սարսափելի քաջ:

Երբ պտտում էր անիւը, երբ թափում էին վրտս կայծակները, երբ լսում էր բոցավառ կայծակների ճայթիւնները, Լուսաբակուն փախչում էր դէս ու դէն, կուչ էր գալիս, կռւում էր, զինաթափ էր լինում, խանձում էր կապոյտ բոցերի մէջ և ապա թմրում, թուլանում և կիսամեռ. կամ սուտ սատկել անում վեր ընկնում մի անկիւնում: Լուսաբակոյի այդպիսի հոգեւարժ դրութեան ժամանակ մի փոքր ազատ շունչ էի քաշում և սկսում էի սենեակի մէջ ոտով ման գալ:

Ելէքտրական մեքենան մի կողմից, բժ. Բ.-եանցի նշանակած դեղերը միւս կողմից, բաղնիսի հանքային եռման ջրերը երրորդ կողմից չրջապատել էին Լուսաբակոյին և ուրախութեամբ:

Երրորդ անգամ միևնոյն բժշկութիւնը կրկնելուց յետոյ, ես ահագին փոփոխութիւն պահեցի. ցաւը չբոլորովին մեղմացել էր. գիշերները հանգիստ քնում էի:

Վեցերորդ անգամից յետոյ ես, որ տան մէջ չէի կարող ման գալ, ոտով գնացի բաղանիս և վերադարձայ:

Իններորդ անգամից յետոյ ոտով դնացի բռնակի մօտ և վերադարձայ տուն:

Տասնեկրկուերորդ անգամին Լուսաբակօն զինաթափ եղած հոգեւարք դրութեան մէջ փշուժ էր իւր վերջին շունչը:

15 երորդ անգամին արդէն չկար Լուսաբակօն, վերջացրինք բռնակութիւնը. բայց այնուամենայնիւ հիւանդ և առողջ ոտքիս մէջ խոշոր զանազանութիւն կար: Բժիշկը վերջացրեց բռնակութիւնը և խորհուրդ տուեց վերադառնալ Կարս և առաւօտները աղջուր քսել հիւանդ ոտքիս. և ընդունել նշանակած դեղերը:

Կատարեցինք յարգելի բռնակի խորհուրդները և մի ամսից յետոյ ես կատարեալ առողջ էի:

Ուրեմն դեկտեմբերի 22-ին հիւանդ, յուսահատ զանազան դեղերի մէջ տանջուած, հազարաւոր փալաս-մալասներով հիւանդ ոտքս փաթաթած մտայ Տփլիս. 29-ին բժ. Բ.-եանցը սկսեց բռնակութիւնը, իսկ յունուարի 12-ին առողջացած դուրս եկայ Տփլիսից:

Այժմ մի հետաքրքիր հարց:

Անտարակոյս բռնական գիտութիւնը ամեն աշխարհ, ամեն երկիր և ամեն համալսարան միակերպ են աւանդում: Բոլոր բժիշկները անցել են միևնոյն ծրագիրը և միևնոյն գիտութիւնը. ուրեմն ի՞նչ է պատճառը, որ իմ հիւանդութիւնս՝

1. Խնամի Սալոյի համար երեքացաւ «Մզհանգուստ»:
2. Ապարանցի պառաւի համար «Ղոլինջ»:
3. Բժ. Վ. կովի համար «Դատարկ բան»:
4. Տէր-Խ.-եանցի համար «Բնամի»:
5. Բժ. Հ. եանցի համար «Բնամախզմ»:
6. Զինուորական բռնակի կարծիքով. «Լուսաբակ»:
7. Աղիզ բարեկամիս կարծիքով «Իշու քամի»:
8. Բժիշկ Բ.-եանցի կարծիքով «Զղային հիւանդութիւն»:

Ես բազմաթիւ օրինակներ կարող եմ առաջ բերել որ միևնոյն հիւանդութիւնը մէկ բռնակի համար «ջրգողութիւն» է երկրորդի համար «բակ» է, երրորդի համար՝ «թոքերի բորբոքում», չորրորդի համար՝ «պարոկ սերտց», հինգերորդի համար «թոքախտ» ...

Սարիբեգ Տէր-Մելիսեղեկեանց

1902 թ. 20 Հոկտ.

Կարս